ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2000թ. N 254

ք. Ստեփանակերտ

Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին

«Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասին, «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին[*5)] համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22 հոդվածի պահանջներն ու նպատակ ունենալով ուժեղեցնելու վերահսկողությունը հարկ վճարողների (այդ թվում՝ ֆիզիկական անձանց) կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի շրջանառության օրինականության նկատմամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել նյութական ու ոչ նյութական ակտիվների, *ծառայությունների (աշխատանքների)*[*4)] ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազմման կարգը (կցվում է):

2. Սահմանել, որ՝

ա/ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները համարվում են բավարարված, եթե դրանք որպես ծախս հաշվեգրելու համար ակտիվների ձեռքբերման գծով իրականացված տնտեսական գործառնությունները հարկ վճարողի մոտ ձևակերպված են սկզբնական հաշվառման (հաշվապահական) փաստաթղթերով (հաշվարկային ու այլ փաստաթղթերով), և եթե ծախս ձևակերպող հարկ վճարողների մոտ փաստացի կատարված գործառնություններին վերաբերող առկա սկզբնական հաշվառման (հաշվապահական) փաստաթղթերն ունեն հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենքներով ու իրավական այլ ակտերով ծախսերի (ծախսումների) հավաստիության (հիմնավորվածության) նկատմամբ ներկայացվող պահանջներն ապահովելու համար անհրաժեշտ տվյալները և տարրերը, իսկ սույն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված նյութական ու ոչ նյութական ակտիվների, ապրանքանյութական պաշարների, այլ ակտիվների ձեռքբերման դեպքում՝ նաև այլ անհրաժեշտ տվյալներ ու տարրեր.

բ/ սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթներին համապատասխան կազմված ծախսերը հիմնավորող փաստաթուղթը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չլինելու դեպքում, համարվում է նաև գործարքի մյուս կողմի եկամուտները հիմնավորող փաստաթուղթ.

գ/ սույն որոշմամբ հաստատված կարգի վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ.

դ/ սույն որոշման դրույթները տարածվում են որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի վրա:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հաստատված է
ԼՂՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 26-ի թիվ 254 որոշմամբ

ԿԱՐԳ

նյութական ու ոչ նյութական ակտիվների, *ծառայությունների (աշխատանքների)*[*4)] ձեռք բերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազմման

1. Ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջները

1. Ծախսերի հաշվեգրման համար նյութական և ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև ծառայությունների (աշխատանքների) ձեռքբերման ժամանակ իրականացված գործարքները հավաստող փաստաթղթեր կարող են համարվել, մասնավորապես՝

ա) հարկային հաշիվը.

բ) հաշիվ-ապրանքագիրը.

գ) կրճատ հաշիվ-ապրանքագիրը.

դ) ապրանքանյութական բեռնագիրը.

ե) պահեստի ելքի անդորրագիրը (ապրանքագիրը).

զ) կատարողական ակտը.

է) աշխատավարձի հաշվարկային կամ հաշվարկավճարային տեղեկագիրը.

ը) քարտային անդորրագիրը.

թ) բանկային ծառայությունների մատուցումը հավաստող անդորրագիրը կամ քաղվածքը կամ այլ փաստաթուղթ.

ժ) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված՝ վճարների կատարումը հավաստող փաստաթղթերը.

ժա) հսկիչ-դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) կտրոնը.

ժբ) միակողմանի գնման ակտը:

Սույն կետում նշված փաստաթղթերի (բացառությամբ «ժբ» ենթակետում նշվածի) ամբողջությունն անվանվում է նաև հաշվարկային փաստաթուղթ, ընդ որում, կրճատ հաշիվ-ապրանքագիրը, հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնը և միակողմանի գնման ակտն այսուհետ կանվանվեն նաև միակողմանի փաստաթուղթ, իսկ սույն կետում նշված մնացած բոլոր փաստաթղթերը՝ երկկողմանի փաստաթուղթ:

Սույն կարգի իմաստով կրճատ հաշիվ-ապրանքագիր է համարվում այն հաշվարկային փաստաթուղթը, որում առկա են սույն կարգի 2-րդ կետի «ա», «բ», «դ» և «ե» ենթակետերով նախատեսված վավերապայմանները, ինչպես նաև ակտիվներ ձեռք բերող կամ ծառայություններ ստացող (աշխատանքներ ընդունող)՝ հարկ վճարող իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը և փաստացի գործունեության վայրը (հասցեն) կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը կամ հանրային ծառայության համարանիշը)[*6)], *իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական հաշվառման*[*5)] *վկայականի համարը:*

Սույն կարգի իմաստով միակողմանի գնման ակտ է համարվում այն փաստաթուղթը, որում առկա են սույն կարգի 2-րդ կետի «ա», «գ», «դ» և «ե» ենթակետերով նախատեսված վավերապայմանները:[*2),*4)]

2. Հաշվարկային փաստաթուղթը հարկ վճարողի իրականացրած գործարքը հաստատող՝ հարկման հիմք հանդիսացող (ծախսերը հիմնավորող) հաշվարկային փաստաթուղթ է, որում արտացոլված են (ներառված են ըստ էության) հետևյալ վավերապայմանները՝

ա/ հաշվարկային փաստաթղթի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը.

բ) ակտիվներ օտարող կամ ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) հարկ վճարողի՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀԿՀՀ) ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ ՀԿՀՀ,

- իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), ինչպես նաև կնիքը (դրոշմակնիքը)՝ բացառությամբ, եթե հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության հարկ վճարողի կողմից և պարունակում է գեներացված սերիա ու համար [*6)]*(Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված հարկ վճարողի համար՝ կնիքի*

(դրոշմակնիքի) վրա ՀԿՀՀ-ի պարտադիր նշմամբ) և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը,

*- ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը կամ հանրային ծառայության համարանիշը)[*6)], իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական հաշվառման[*5)] վկայականի համարը.*

գ) ակտիվներ ձեռք բերող կամ ծառայություններ ստացող (աշխատանքներ ընդունող) հարկ վճարողի՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում ՀԿՀՀ ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ ՀԿՀՀ,

- իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), ինչպես նաև կնիքը (դրոշմակնիքը) (Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված հարկ վճարողի համար՝ կնիքի (դրոշմակնիքի) վրա ՀԿՀՀ-ի պարտադիր նշմամբ) և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը,

*- ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը կամ հանրային ծառայության համարանիշը)[*6)], իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական հաշվառման[*5)] վկայականի համարը.[*1),*4)]*

դ/ ակտիվների անվանացանկն ու քանակը և (կամ) ծառայությունների տեսակն ու ծավալը

ե/ ակտիվների միավորի գինը՝ *դրա առանձնացումը հնարավոր լինելու դեպքում[*4)]* և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինն ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը:

II. Ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերին ներկայացվող պահանջների առանձնահատուկ դեպքերը

3. Սույն կարգի 2-րդ կետի «բ», «գ», «դ» և «ե» ենթակետերի որոշ վավերապայմաններ հաշվարկային փաստաթղթում արտացոլված չլինելու դեպքում այդ ենթակետերի պահանջները համարվում են բավարարված, եթե՝

առկա է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքված գրավոր պայմանագիր, որում արտացոլված են այդ վավերապայմանները, իսկ հաշվարկային փաստաթղթում առկա է հատուցման ենթակա ընդհանուր գումարը, գործարքն իրականացրած հարկ վճարողների լիրազորված անձանց պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունն ու ստորագրությունը և կատարված է հղում պայմանագրի ամսաթվին.

գործարքն իրականացվում է լիազորագրի (տեղեկանքի) հիման վրա (առանց կողմերի միջև գրավոր պայմանագրի կնքման), որում արտացոլված են՝

ակտիվներ վաճառող (տրամադրող) իրավաբանական անձի (իրավաբանական անձանց հիմնարկների, իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության) կողմից տրված լիազորագրի (տեղեկանքի) դեպքում՝

*իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), ինչպես նաև կնիքը (դրոշմակնիքը) (Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված հարկ վճարողի համար՝ կնիքի (դրոշմակնիքի) վրա ՀԿՀՀ-ի պարտադիր նշմամբ) և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը.[*1),*4)]*

ակտիվներ վաճառող (տրամադրող) ֆիզիկական անձի կողմից տրված լիազորագրի (տեղեկանքի) դեպքում՝

*ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը կամ հանրային ծառայության համարանիշը)[*6)], իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական հաշվառման[*5)] վկայականի համարը.[*4)]*

ակտիվներ ձեռք բերող (ստացող) իրավաբանական անձի (իրավաբանական անձանց հիմնարկների, իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության) կողմից տրված լիազորագրի (տեղեկանքի) դեպքում՝

*իրավաբանական անձի, նրա մշտական հաստատության (այդ թվում՝ հիմնարկի, մասնաճյուղի, ներկայացուցչության) լրիվ անվանումը, փաստացի գործունեության վայրը (հասցեն), ինչպես նաև կնիքը (դրոշմակնիքը) (Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված հարկ վճարողի համար՝ կնիքի (դրոշմակնիքի) վրա ՀԿՀՀ-ի պարտադիր նշմամբ) և (կամ) ղեկավարի (կամ փոխարինող անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը.[*1),*4)]*

ակտիվներ ձեռք բերող (ստացող) ֆիզիկական անձի կողմից տրված լիազորագրի (տեղեկանքի) դեպքում՝

*ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) վայրը (հասցեն), ինչպես նաև անձնագրի (անձը հաստատող այլ փաստաթղթի) սերիան և համարը կամ հանրային ծառայության համարանիշը)[*6)], իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը և պետական հաշվառման[*5)] վկայականի համարը.[*4)]*

Կազմվող հաշվարկային փաստաթղթում պարտադիր ներառվում են սույն կարգի 2-րդ կետում նշված մնացած վավերապայմանները, ինչպես նաև հղումը լիազորագրին (տեղեկանքին) և լիազորված ֆիզիկական անձի անունը (անվան սկզբնատառը), ազգանունն ու ստորագրությունը.

3[1] . Վճարային քարտերով վճարման դեպքում՝ վճարային քարտերով գործառնության ընթացքում ձևավորված անդորրագրերում (այսուհետ՝ քարտային անդորրագիր) սույն կարգի 2-րդ կետի «բ», «գ», «դ» և «ե» ենթակետերով սահմանված պահանջները համարվում են բավարարված, եթե՝

ա) առկա է ակտիվներ վաճառող (տրամադրող) կամ ծառայություն մատուցող հարկ վճարող՝

- իրավաբանական անձի, իրավաբանական անձանց հիմնարկների, իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության լրիվ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն),

- անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, բնակության (հաշվառման) հասցեն և «Ա/Ձ» նշումը,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն).

բ) առկա է ակտիվներ կամ ծառայություններ ստացող հարկ վճարող՝

- իրավաբանական անձի, իրավաբանական անձանց հիմնարկների, իրավաբանական անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության և վճարային քարտ թողարկող բանկի միջև կնքված պայմանագրի հիման վրա տրամադրված իրավաբանական անձին, իրավաբանական անձանց հիմնարկներին, իրավաբանական անձի մասնաճյուղին կամ ներկայացուցչությանը նույնականացնող քարտային համարը,

- անհատ ձեռնարկատիրոջ և վճարային քարտ թողարկող բանկի միջև կնքված պայմանագրի հիման վրա տրամադրված անհատ ձեռնարկատիրոջը նույնականացնող քարտային համարը,

- ֆիզիկական անձի և վճարային քարտ թողարկող բանկի միջև կնքված պայմանագրի հիման վրա տրամադրված ֆիզիկական անձին նույնականացնող քարտային համարը, ինչպես նաև այդ ֆիզիկական անձի գործատուի կողմից սահմանված կարգով դուրս գրված փաստաթուղթ (հանձնարարություն, կարգադրություն և այլ), որով հավաստվում է գործատուի հաշվին տվյալ ֆիզիկական անձի կողմից այդ գնումները կատարելու իրավասությունը,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն) կամ այն առկա է ակտիվներ (ծառայություններ) ստացող հարկ վճարողի և վճարային քարտ թողարկող բանկի միջև կնքված պայմանագրում.

գ) առկա է ակտիվների անվանացանկն ու քանակը և (կամ) ծառայությունների տեսակն ու ծավալը, կամ քարտային անդորրագրին կցվում է ակտիվներ կամ ծառայություններ ստացող հարկ վճարողի կողմից հավաստված այլ փաստաթուղթ, որը կարող է լրացվել ակտիվներ կամ ծառայություններ ստացող հարկ վճարողի կողմից ինքնուրույնաբար և որում արտացոլված են նույն գումարի չափով ակտիվների անվանացանկն ու քանակը և (կամ) ծառայությունների տեսակն ու ծավալը.

*դ) առկա է ակտիվների միավոր գինը և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինն ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը, կամ քարտային անդորրագրին կցվում է ակտիվներ կամ ծառայություններ ստացող հարկ վճարողի կողմից հավաստված այլ փաստաթուղթ, որը կարող է լրացվել ակտիվներ կամ ծառայություններ ստացող հարկ վճարողի կողմից ինքնուրույնաբար և որում առկա է նույն գումարի չափով միավորի գինը և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինն ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը:[*2)]*

4. Ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերին ներկայացվող պահանջները բավարարված են համարվում նաև այն դեպքերում, եթե՝

*ա/ ակտիվներ վաճառող (տրամադրող) հարկ վճարողի եկամուտները հիմնավորված համարվելու համար՝ հաշվարկային փաստաթղթերում առկա են սույն կարգի 2-րդ կետի «ա», «բ», «դ», «ե» ենթակետերով նախատեսված վավերապայմանները և ակտիվներ ձեռք բերող (ստացող) հարկ վճարողի կնիքը, եթե գործարքի արժեքը գերազանցում է 300[*4)] հազ. դրամը ու ՀՎՀՀ-ն.*

բ/ ակտիվներ ձեռք բերող (ստացող) հարկ վճարողի ծախսերը հիմնավորված համարվելու համար՝ հաշվարկային փաստաթղթերում առկա են սույն կարգի 2-րդ կետի «ա», «գ», «դ», «ե»

*ենթակետերով սահմանված վավերապայմանները և ակտիվներ առաքող հարկ վճարողի կնիքը, եթե գործարքի արժեքը գերազանցում է 300[*4)] հազ. դրամը՝ բացառությամբ, եթե հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության հարկ վճարողի կողմից և պարունակում է գեներացված սերիա, համար [*6)] ու ՀՎՀՀ-ն:[*1)]*

5. Կրճատ հաշիվ-ապրանքագիրը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառվող ՀԴՄ-ների կտրոնները (սույն կարգի 2-րդ կետի «գ» ենթակետում նշված վավերապայմանները ձեռք բերողի կողմից ինքնուրույնաբար լրացվելու դեպքում՝ անմիջականորեն ՀԴՄ-ի կտրոնի վրա կամ դրան կցված փաստաթղթում) ընդունվում են որպես ծախսերը հիմնավորող փաստաթուղթ, եթե դրանց հանրագումարը չի գերազանցում ամսական 1.0 մլն դրամը՝ միանվագ գործարքը 300 հազ. դրամը չգերազանցելու դեպքում:

*Սույն կետի առաջին պարբերության դրույթները կիրառվում են նաև ժամանակի ընթացքում մաշված ՀԴՄ-ների կտրոնների վրա, եթե հարկ վճարողի մոտ առկա է դրան համապատասխանող պարզեցված հաշվարկային փաստաթուղթը կամ այդ ՀԴՄ-ի կտրոնի ընթեռնելի պատճենը, ինչպես նաև՝ այն դեպքերում, երբ ՀԴՄ-ի կտրոնի վրա բացակայում են սույն կարգի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերում նշված վավերապայմանները՝ դրանք հարկ վճարողի կողմից ինքնուրույնաբար լրացվելու դեպքում (անմիջականորեն ՀԴՄ-ի կտրոնի վրա կամ դրան կցված փաստաթղթում):[*4)]*

*5[1]. Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ունեցող անձանց համար պետական կարգավորող մարմնի կողմից ռադիոհաճախականության օգտագործման վճարների մասով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերն ընդունվում են որպես ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե այդ փաստաթղթերում առկա են հաշվարկային փաստաթղթի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը, այդ մարմնի լրիվ անվանումը, հարկ վճարողի հաշվարկման համարը (ՀՎՀՀ-ն), գտնվելու վայրը (հասցեն), դեկավարի (սահմանված դեպքերում՝ այլ պաշտոնատար անձի) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը, ստորագրությունը, կնիքը, ծառայության տեսակը և ընդհանուր արժեքը: Այդ դեպքում սույն կարգի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված համապատասխան տվյալները թույլտվություն ունեցող անձանց կողմից լրացվում են ինքնուրույնաբար՝ ծառայությունների ընդունումը ձևակերպելուց առաջ՝ անմիջականորեն հաշվարկային փաստաթղթերի վրա կամ դրան կցված փաստաթղթում:[*3)]*

III. Ծախսերը հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված չլինելը

6. Ծախսերը հաշվարկային փաստաթղթերով հարկման նպատակով հիմնավորված չեն համարվում (և, համապատասխանաբար, հարկային պարտավորությունը հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով հաշվարկելու համար հիմք չեն հանդիսանում, բացառությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերի), եթե էականորեն խախտվել են սույն կարգի 2-րդ, 3-րդ, *3[1]-րդ,[*2)]* 4-րդ, *5-րդ և 5[1]-րդ[*3)]* կետերի պահանջները: *Ընդ որում, նշված որեւէ պահանջի (պահանջների) չկատարումն ինքնին չի նշանակում, որ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը հարկման նպատակով չեն ընդունվում, քանի դեռ նշված այլ վավերապայմաններ, ըստ էության, հիմնավորում են կատարված ծախսերը:[*4)]*

6.1. Անկախ սույն կարգի 6-րդ կետի դրույթներից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս ստացված ծառայությունների (ընդունված աշխատանքների) գծով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները համարվում են էականորեն խախտված, եթե այդ փաստաթղթերում առկա չէ ստորև նշված վավերապայմաններից որևէ մեկը՝

1) ծառայություններ մատուցողը (աշխատանքներ կատարողը).

2) ծառայությունների (աշխատանքների) տեսակը.

3) ժամանակահատվածը, որի ընթացքում մատուցվել (կատարվել) են հաշվարկային փաստաթղթերում նշված ծառայությունները (աշխատանքները):

*Սույն կետի 3-րդ ենթակետում նշված պայմանը հաշվարկային փաստաթղթում արտացոլված չլինելու դեպքում՝ այդ կետի պահանջը համարվում է բավարարված, եթե ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ժամանակահատվածն արտացոլվել է ծառայության մատուցման (աշխատանքների կատարման) գործարքի կողմերի միջև կնքված պայմանագրում (դրա հավելվածում) և (կամ) կատարողական ակտում և (կամ) հանձնման-ընդունման ակտում, և հաշվարկային փաստաթղթում կատարված է հղում այդ փաստաթղթին (փաստաթղթերին):[*6)]*

IV. Ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը կազմելը (լրացնելը)

7. Ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը կազմվում են առնվազն երկու օրինակից (օրենսդրությամբ, մասնավորապես, բանկային գործառնությունները կարգավորող, նախատեսված լինելու դեպքերում՝ նաև ավելի), որոնք պետք է լինեն նույնական (առանձին-առանձին կնքված կամ դրոշմակնքված ու ստորագրված): Դրա մի օրինակը պետք է գտնվի ապրանքն

առաքող կամ ծառայությունը մատուցող հարկ վճարողի, իսկ մյուսը՝ ապրանքներ կամ ծառայություններ ստացող հարկ վճարողի մոտ: Գործարքի իրականացման պահին բնօրինակի չտրամադրման դեպքում այն ուղարկվում է փոստով:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հարկ վճարող հանդիսացող անձանց միջև ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը լրացվում են հայերեն: Գնորդի (ծառայությունից օգտվողի) համաձայնությամբ (պահանջով) նրանց կարող է տրվել այդ փաստաթղթի օտար լեզվով լրացված օրինակ:

9. Ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը կարող են լրացվել (կազմվել)՝ ներառելով նաև այլ (սույն կարգի 2-րդ կետում չնշված) տվյալներ ու տեղեկություններ (մասնավորապես, սահմանված դեպքերում՝ նշում անուղղակի հարկերի մասին[*4)]):

**1) ԼՂՀ կառավարության 22.06.04թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 254 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 246 որոշման խմբագրությամբ:*

**2) ԼՂՀ կառավարության 26.06.07թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 254 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 275 որոշման խմբագրությամբ:*

**3) ԼՂՀ կառավարության 01.12.08թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 254 որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» թիվ 835 որոշման խմբագրությամբ:*

**4) ԼՂՀ կառավարության 24.03.09թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 254 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 171-Ն որոշման խմբագրությամբ:*

**5) ԼՂՀ կառավարության 28.01.14թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի N 254 և 2001 թվականի հունիսի 19-ի N 168 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 28-Ն որոշման խմբագրությամբ:*

**6) ԼՂՀ կառավարության 28.11.14թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի N 254 որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» N 813-Ն որոշման խմբագրությամբ (սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը: Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջը տարածվում է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի նկատմամբ:):*